«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Մայիսյան հերոսամարտերի նշանակությունը
ԱՌԱՐԿԱ	Ռազմագիտություն
ՀԵՂԻՆԱԿ	Մերյոժա Հարությունյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Չարենցավանի հ5 դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն----------2

2. Գլուխ I. Սարդարապատի ճակատամրտը. 1918թ. Մայիսի 22-29----------4

3. Գլուխ II. Բաշ-Ապարանի հերոսամարտը՝ 1918թ. Մայիսի 22-29----------11

4. Գլուխ III . Ղարաքիլիսայի ճակատամարտը. 1918թ. Մայիսի 24-28----------15

5. Եզրակացություն----------19

6. Օգտագործված գրականություն----------20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկության պատմության մեջ լինում են պահեր, երբ իրար են գալիս պատմական փորձն ու աննախադեպը, ժողովրդական-մարդկային իմաստությունն ու գերմարդկային խիզախումն, և անօրինակ այս կուտակումներով ստեղծված ահռելի լարումից, ինչպես խավարի մեջ պայթած կայծակի շառափից, լուսավորում են ժամանակն ու տարածությունը: Այդպիսի պահերին են լուծվում սովորական պայմաններում անլուծելի թվացող հարցերը:

Հայ ժողովրդի հազարամյա պատմության աստեղային ժամը Սարդարապատի ճակատամարտն էր, 1918թ. մայիսյան այն հրեղեն շաբաթը, որը կործանման եզրին հասած հայ ազգի համար դարձավ գոյամարտի ու ազգապատմության խարիսխը: Պատերազմները խաղաքարտի վրա են դնում ժողովուրդների ճակատագրերը, երկրներ են վերաձևում ու վերաբաժանում: Պատերազմներում մեծ ու հզոր տերությունները քայլում են դեպի ծավալապաշտական երազանքների իրական պատկերը, և փոքրերն ու անզորները, անմեղ թե մեղավոր, տրորվում են նրանց հաղթական երթից[1]:

Հայերը կարծում էին, թե վերջապես կխախտվի դարերով հաստատված այն օրենքը, և իրենք պետք է օգտվեն մեծ տերությունների հաղթական երթից: Չօգտվեն էլ, գոնե պիտի փրկվեն թուրքական բռնությունից ու ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից: Չէ՞ որ Թուրքիայի դեմ ռազմաերթի էին եղել աշխարհի հզոր տերությունները:

Հաղթողին չեն դատում:

Հայն իր բազմադարյան պատմության մեջ պարտություն շատ է տեսել, որպեսզի խորշի այդ օրինակ ինքնագոհ իմաստականությունից: Հայը միշտ էլ փոքր ուժերով կռվել է իր մեծաքանակ թշնամիների դեմ և շատ է պատահել, որ անհավասար ու ահեղ այդ ճակատամարտերում նրան վիճակվել են պատրություն, կոտորած, արհավիրքներ և մահեր: Դրա համար էլ նա փարվել է ուրիշ մի իմաստության. չիմացյալ մահը մահ է, իմացյալ մահը՝ անմահություն: Իմացյալ մահը, որ անմահացնում է ոչ միայն հայրենիքի ու նրա սրբազան գործի համար ընկածին, այլև բովանդակ ազգին: Եվ այսօր, Վարդանանց հերոսական պատերազմի ու սուրբ նահատակության օրը, երբ պիտի ոգեկոչեիք մեր նախնյաց անթառամ հիշատակը, երբ պիտի մեր սրբարաններում խաղաղ ծխար նրանց փառքի համար վառված խունկը, մեր հայրենի եզերքը տնքում է նոր բռնակալի ոտքի տակ, մեր արևը մռայլվել է նրա բերած վառոդի ծխից, մեր գետերն ու աղբյուրները վարարել են նրա հեղած արյունից... Եթե պարսիկն Ավարայր էր հասել մեր հավատն ու ազգային ինքնությունը վերացնելու,

[1] Բ. Ուլուբաբյան, Սարդարապատ, Երևան. Նաիրի, 1990:

այսօրվա թշնամին մեր ազգի կեսը կոտորել և մյուս կեսն է ուզում ոչնչացնել... Փոխվել են ժամանակները, փոխվել են ազգերն ու ցեղերը: Ավարայրում մեր դեմ կանգնած էր թշնամի, որ միայն բռնակալ էր, ուզում էր ոչնչացնել մեր լեզուն ու հավատը: Թուրքը մե՛զ է ոչնչացնում: Ուրեմն, այստեղ նահատակությունն էլ չի կարող օգնել, որովհետև մեր նահատակությունից հետո ոչ մի հայ չի մնա, որպեսզի բարի հիշի սարդարապատյան նահատակությունը:

Պատմության դասերն այլևս անզոր են այսօրվա մեր ազգային աղետի առաջ: Այսօր միայն հաղթանակն է, որ պիտի հայությանը փրկի վերահաս կործանումից: Ուրեմն, կռվենք ու հաղթենք, հաղթենք ու ապրենք՝ ի հեճուկս դարավոր թշնամու: Կռվենք ու հաղթենք ինչպես Արցախի ազատագրման համար կռվում են մեր հայ քաջորդիները:

<u>Հետազոտական աշխատանքի նպատակը</u>-*Կատարելագործել սովորողների մոտ ինքնուրույն վերլուծություններ կատարելը,զարգացնել քննադատական մտածողությունը,վեր հանել տվյալ ժամանակաշրջանի քաղաքական դրությունը և արտահայտել սեփական կարծիքը ,բարձրացնել հավատը սեփական ուժերի նկատմամբ,արժևորել ազգ-բանակ-ժողովուրդ կապը;*

<u>Հետազոտական աշխատանքի խնդիրները-ՈՒսումնասիրել Մայիսյան հերոսամարտերում հայոց բանակի զինուժի կառուցվածքը,զորահրամանատարության ռազմական գիտելիքները,բացահայտել Ղարաքիլիսայի ճակատամարտում հայերի պարտության պատճառները,վերլուծել և համեմատել Մայիսյան հերոսամարտերը և Արցախյան պատերազմի ռազմական գործողությունները;գնահատել հայկական բանակի դերը ազգապահպանման գործում,քննարկել հայ և եզդի ժողովուրդների սասսբարեկամությունը այս երկու պատերազմներում;</u>

ԳԼՈՒԽ I

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 1918թ. ՄԱՅԻՍԻ 22-29

1918թ. մայիսին, Արևելյան Հայաստանի սրտում մղվող կենաց ու մահու գոտեմարտում հայ ժողովուրդը ի զորու գտնվեց պաշտպանելու իր հայրենիքի մի զգալի մասը թուրք բարբարոսներից և վերակերտելու դարեր առաջ կորսված պետականությունը:

1918 թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլը դավադրաբար գրավելուց հետո թուրքական երրորդ բանակի «Կարս» զորախումբը (հրամանատար Յաղուբ Շևքի փաշա) ձեռնամուխ եղավ Արևելյան Հայաստանի գրավմանն ուղղված ռազմական գործողությունների իրականացմանը: Հայ-թուրքական ռազմաճակատի հյուսիսային թևում հարձակվող 5-րդ ԿՀԴ-ն (Կովկասյան հետևակային դիվիզիա, հրամանատար Մյուրսել-Բեյ) նպատակ ուներ Ղարախաչի լեռնանց- Վորոնցովկա-Բոլնիս Խաչեն երթուղով հարվածել Թիֆլիսին՝ հարավից:

Ալեքսանդրապոլ-Երևան երթուղու երկայնքով Երևանի վրա էր շարժվում 36-րդ ԿՀԴ-ն (հրամ. Քյազիմ-Բեյ), որն Երևանի գրավումից հետո պետք է շարունակեր առաջխաղացումը մինչև Ջուլֆա և աջակցեր Ատրպատականում գործող թուրքական ուժերին: Այս 2 ուղղությունների միջև ընկած տարածքում, Ալեքսանդրապոլ-Մեծ Ղարաքիլիսա գծով հարձակվում էր 11-րդ ԿՀԴ-ն (հրամ. Ջավիդ-Բեյ) և 9-րդ (հրամ. Էսադ փաշա) ԿՀԴ-ները: Սրանցից 1-ինը նպատակ ուներ գրավել Մեծ

Ղարաքիլիսա ավանը և Դիլիջան-Քարվանսարա-Ղազախ գծով դուրս գալ Ելիզավետպոլ (Գանձակ)՝ միանալով տեղի մուսավաթական հրոսակախմբերին[2]:

Դրանից հետո թուրք-թաթարական միացյալ ուժերն արշավելու էին դեպի Բաքու, ինչը և տեղի ունեցավ հետագայում:

Արաքսից հարավ, Սուրմալուի գավառում հարձակվում էր թուրքական 4-րդ կորպուսը, որը նպատակ ուներ նախ՝ աջակցել Արարատյան դաշտում հարձակվող իրենց ուժերին, իսկ հետո՝ գրավելՊարսկաստանի հյուսիս-արևմուտքը՝ Ատրպատականը: «Կարս» զորախմբի 4 ուղղություններով իրականացվող գործողությունները հետապնդում էին ոչ միայն զուտ ռազմական նպատակներ: Դրանք նախ և առաջ նպատակաուղղված էին պանթուրքիզմի մոտակա և ամենահրատապ խնդրի լուծմանը՝ արևելահայության լիակատար ոչնչացմանը: 1918թ. թուրք հրոսակները պատրաստվում էին Արևելյան Հայաստանում կրկնել այն, ինչ արեցին 1915թ. Արևմտյան Հայաստանում: Ռազմական գործողությունների հետագա ողջ ընթացքն ապացուցեց թուրքական ղեկավարության այդ մտադրությունը:

Հայության իսպառ ոչնչացման ծրագիրը թուրերն անթաքույց և լկտի կերպով էին իրականացնում, որ դա ստիպված էր խոստովանել նույնիսկ 1-ին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի ավագ դաշնակից՝ կայզերական Գերմանիայի Կ. Պոլսում ռազմական կցորդ գեներալ ֆոն Լոսովը, ով մայիսի 15 -ին թուրքական հարձակման վերահսկման կապակցությամբ՝ Թուրքիայի մայրաքաղաքից Բեռլին էր հաղորդում հետևյալը.«Մաքուր հայկական մարզեր Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատմամբ թուրքերի չափից դուրս պահանջները ցույց են տալիս, որ նրանք ձգտում են գրավել Բրեստի պայմանագրով չնախատեսված մարզեր, շահագործել Կովկասը և իրականացնել հայերի լրիվ ոչնչացումը Անդրկովկասում»[3]:

Արևելյան Հայաստանը՝ լայնքով ու երկայնքով բզկտել պատրաստվող արյունառուշտ թշնամու ծրագրերն, սակայն վիճակված չէին իրականանալու: Միակամ կերպով ոտքի ելած հայ ժողովուրդը կերտեց 1918թ. մայիսյան հերոսամարտերը՝ Սարդարապատը, Բաշ -Ապարանը և Ղարաքիլիսան՝ զենքով նվաճելով գոյության իր իրավունքը և ապացուցելով, որ հազարամյա ոսոխին անհրաժեշտության դեպքում կարելի է և պետք է ջախջախել:

[2] Ռ. Թաղևոսյան, Դրվագներ Հայոց ռազմի պատմությունից. 19-20-րդ դդ., Երևան, Զանգակ, 2012:
[3] Հ. Գ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Հայաստան հրատարակչություն, Երևան 1965:

Երևանյան զորախմբի հիմնական հարվածային ուժը կազմում էր Հայկական կորպուսի 2-րդ դիվիզիան, որը տեղակայված էր Արարատյան դաշտում և պաշտպանում էր Երևանը: Զորախմբի հյուսիս-արևելյան առաջապահն էր կազմում Արագածի ջոկատը (հրամ. գնդապետ Կազիմիրսկի), որը տեղակայված էր Ալեքսանդրապոլից հարավ՝ Ախուրյանի ձախ ափին: Մայիսի 18-20-ին հարձակվող թուրքական 36-րդ ԿՀԴ-ի ճնշման տակ Արագածի ջոկատն նահանջեց Արարատյան դաշտ և միաձուլվեց Երևանյան զորախմբին(Սարդարապատի ջոկատ): Ողջ հայ-թուրքական ռազմաճակատի հարավային թևը կազմում էր Իգդիրի ջոկատը (հրամ. գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյան), որը տեղակայված էր Սուրմալուի գավառում և կոչված էր պաշտպանելու Երևանն ու Արարատյան դաշտը հարավից: Իգդիրի ջոկատը մայիսի 18-20-ին ստիպված էր թողնել Սուրմալուն և անցնել Արաքսի հյուսիսային ափ՝ միաձուլվելով Երևանյան զորախմբին:

Մայիսի 21-ին թուրքական 36-րդ դիվիզիայի առաջապահ ուժերով գրավեցին Սարդարապատ կայարանն ու գյուղը՝ ընդհուպ մոտենալով Էջմիածնին: Առաջխաղացման ընթացքը պահպանելու դեպքում թշնամին կարող էր 2օրվա մեջ մտնել Երևան: Սակայն այդ օրհասական պահին հայ հոգևոր, քաղաքական և ռազմական ղեկավարությունն հանդես բերեց մինչ այդ երբևէ չտեսնված անսասան կամք, վճռականություն և միասնականություն: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը հրաժարվեց թողնել Ս. Էջմիածինը և տեղափոխվել թիկունք: Գեներալ Մ. Սիլիկյանը և Դրոն որոշեցին վերջնականապես դադարեցնել հայկական զորքերի նահանջը և հակառակորդին պարտադրել վճռական ճակատամարտ՝ նրան ամեն գնով ջախջախելու և Երևանից հետ շպրտելու նպատակով:

Հայոց պատմության այդ վճռական պահին գլխավոր դեմքն Արամ Մանուկյանն էր՝ Երևանի Հայոց ազգային խորհրդի նախագահը և Երևանի դիկտատորը՝ սիրված և հարգված ժողովրդի կողմից: 1915թ. Վանի հերոսամարտի կազմակերպիչը 1918թ. մայիսին դարձավ այն առանցքը, որի շուրջը պտտվում էին իրադարձությունները, և որն էլ հաղթանակի առաջնորդեց ժողովրդին ու զորքին:

Հետագա նահանջի կործանարարության գիտակցումն օրվա ղեկավարությունից փոխանցվեց բոլորին և հենց այդ էլ դարձավ մայիսյան ապագա հաղթանակների հիմնական գրավականը:

1918թ. մայիսի 22-ին, գեներալ Մ. Սիլիկյանի մշակած պլանի համաձայն հայկական զորքերն անցան վճռական հակահարձակման Քյորփալու-Արդաշար-Ղորդուղուլի գծից և

հակառակորդին դուրս շպրտեցին մինչև Արաքս կայարան: Ճակատամարտում ձեռք բերված այս 1-ին լուրջ հաղթանակի ազդեցությունը հսկայական էր: Այդ մասին Քրիստափոր Արարատյանը (հայկական հրետանային բրիգադի հրամանատար) գրում է.«Թուրքերը չդիմացան և սկսեցին հետ քաշվել: Դա բարձրացրեց զորքի և բնակչության ոգին, ամբողջ Վաղարշապտը թնդում էր ցնծության պոռթկումից: Բնակիչները սկսեցին խմբերով ներկայանալ՝ զենքով և սննդամթերքով ճակատ մեկնելու համար»:

Մայիսի 24-ին գեներալ Մ. Սիլիկյանը հատուկ հայրենասիրական կոչով դիմեց ժողովրդին«Հայե՛ր, շտապեցեք Հայրենիքը ազատելու: Հասել է պահը, երբ յուրաքանչյուր հայ մոռանալով իր անձնականը՝ հանուն մեծ գործի՝ Հայրենքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության համար պիտի գործ դնի իր վերջին ճիգը թշնամուն հավածելու համար: Հայե՛ր, ժամանակը չէ դանդաղելու, մինչև 50 տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր են զենք վերցնելու: Ես պահանջում եմ բոլորից Հայրենիքի պաշտպանության համար ձեր զենքով ու փամփուշտներով»[4]: Մայիսի 21-29-ին Արագածից մինչև Սևան, Գևորգ Ե-ի հրամանով անընդհատ ղողանջում էին բոլոր եկեղեցիների զանգերը՝ զենքի կոչելով ժողովրդին: Երևանում այդ գործի նախաձեռնողները եղան Թեմական դպրոցի միջին դասարանի աշակերտները (բարձր դասարանցիները զինվորագրվել էին որպես կամավորներ), ովքեր 1-ինը բարձրանալով ռուսական հսկայածավալ եկեղեցում (ներկայիս Ստ, Շահումյանի արձանի տեղում) զանգակատուն՝ հնչեցնում էին զանգերը: Ճակատագրական այդ օրերին հայ հոգևորականության շատ ներկայացուցիչներ Ս. Էջմիածնի միաբան Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, Էրզրումի հոգևոր առաջնորդ Զավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանը, Մշո Ս. Առաքելոց վանքի միաբան Թադևոս Վարդապետը, Աղթամարի վանքի միաբան Դանիել Վարդապետը, գյուղական քահանաներ՝ իրենց գլխավորած աշխարհազորային ջոկատներով, 5-րդ դարի Ս. Ղևոնդյաց օրինակով, որպես մահապարտներ միացան հայ զորքին՝ մարտի և հաղթանակի առաջնորդելով նրան:Արարատյան դաշտում թշնամուն վճռական ճակատամարտ տալու որոշման գործում շատ մեծ դեր խաղաց նաև որոշումը:«Դրոն և Սիլիկյանը, խորհրդակցելուց հետո, գնում են Երևանի Ազգային խորհրդի նախագահ Ա.Մանուկյանի մոտ:Շշուկներ կան,որ թուրքական վտանգի մոտենալը նկատի ունենալով, որոշված է թողնել Երևանը:

-Մենք որոշել ենք, կռիվ պիտի տանք Երևանի փողոցների մեջ և մեր դիակները պիտի թափենք Երևանի մեջ,-հայտարարում է Դրոն:

[4] Հ. Գ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Հայաստան հրատարակչություն, Երևան 1965:

-Ես էլ ձեզ խոսք եմ տալիս,որ Էջմիածնում կմեռնեմ,-մյուս կողմից ավելացնում է զորավար Սիլիկյանը»[5]:

Արամի հրամանով սկսվեց պաշտպանական բնագծի ստեղծումը Երևանից արևմուտք ընկած ՈՒՂթափալար (Եռաբլուր) բլուրների երկայնքով:Նա հրամայեց ամրացնել նաև Կոնդի Ս.Սարգիս և Ս.Աստվածածին եկեղեցիների մատույցները՝ Հրազդան գետի արևելյան բարձրադիր ափը:Դրանով Ա.Մանուկյանը Երևանը նախապատրաստում էր փողոցային մարտերի:Նրա գաղտնի հրամանով զինզմթերքի որոշակի պաշար տեղափոխվեց Կոտայք՝ Երևանի անկման դեպքում պայքարը շարունակելու համար:

Մայիսի 22-ին հաղթական մարտին մասնակցում էին 5-րդ (գնդապետ Պավել Բեկ-Փիրումյան), 6-րդ (գնդապետ Դոլուխանյան), Պարտիզանական (գնդապետ Ա. Պերեկրյոստով) և Իգդիրի հետևակային գնդերը (գնդապետ Ամիրխանյան), գնդապետ Սիլինի Սահմանապահ ջոկատը: Սարդարապատի ճակատամարտում հայկական հրետանու ընդհանուր հրամանատարությունն իրականացնում էր գնդապետ Քրիստափոր Արարատյանը:

Կանոնավոր զորքերի հետ միասին ուս-ուսի տված խիզախորեն մարտնչում էին նաև մեծ թվով կամավորական հեծյալ խմբեր՝ Պանդուխտի, Թռուցիկ Հովսեփի, Մակեդոնի, Բուլանխցի Մուրադի:

Հայկական զորքերի հակահարձակմանը ակտիվ կերպով մասնակցեց նաև եզդիական հեծյալ և հետիոտն աշխարհազորը Ջահանգիր աղայի և Ուսուպ-Բեկի գլխավորությամբ: Կռվի բռնվելով թշնամու հետ ռազմաճակատի առավել վտանգավոր՝ երկաթգծից հարավ ընկած հատվածում, եզդիները Ղուրդուղուլիի մատույցներից ջախջախիչ հակահարվածով հետ շպրտեցին թուրքերին: «Այստեղ չենք կարող զոհունակությամբ չհիշատակել եզդիներու ցեղապետ Ջանգիր աղայի գունդի խիզախ և անվեհեր ճակատամարտերը գեներալ Սիլիկյանի զորամասերուն հետ, անոնց կողքին և առաջին գիծերուն վրա: Ջանգիր աղայի և իր գունդի մասնակցությունը վճռական նշանակություն ունեցավ այդ շրջանի փախստական և տեղական ժողովրդի ճակատագրի վրա»[6]:

Մայիսի 22-24-ը թուրքերը ծանր կորուստներով հետ շպրտվեցին հետ՝ ելման դիրքեր: Թաքցնելու համար այդ ծանր պարտությունները և արդարացնելու համար դրանց հետևանքով ունեցած մեծ կորուստները, թուրքական հրամանատարությունը հնարեց Աղին կայարանում թուրքական զինվորական գնացքաշարի խորտակման կեղծ պատմություն և այն տարածեց մամուլի միջոցով:

[5] «Հայրենիք» օրաթերթ Բոստոն 1956.04.28
[6] «Աշխատանք» օրաթերթ, Երևան 1918.06.08:

Սարդարապատի ճակատամարտից 54 տարի անց, 1972թ. սեպտեմբերի 3-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հատուկ կոնդակով մայիսի 22-ը մտցվեց Հայ առաքելական սուրբ եկեղեցու օրացույցի մեջ որպես «Սարդարապատի հերոսամարտումզոհվածների հիշատակը ոգեկոչելու օր»: Կոնդակով հրահանգվում էր, այսուհետ ամեն տարի՝ այդ օրը հայկական բոլոր եկեղեցիներում կատարել «հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ և պանծացնել նրանց զոհաբերումը՝ վասն հավատո և վասն հայրենյաց»:

Սարդարապատի ջոկատի շտաբի պետ, ազգությամբ գերմանացի, կապիտան Ալ. Շնեուրը իր հիշողություններում ներկայացնում է հայկական հարձակման պլանը: «Կարճ ասած՝ կռվի հատակագիծը հետևյալն էր.- Սարդարապատի ջոկատն կիր հարձակումով թուրքերին գամում է իրենց դիրքերին, հնարավորություն տալով Խիզնաուրի ջոկատին դուրս գալու նրանց խորը թիկունքը և այնտեղ կռիվ սկսել թիկունքային ճամբարների վրա: Այդ ժամանակ Սարդարապատի ջոկատի մասերը պիտի անցնեն ընդհանուր հարձակումի՝ ճակատից»:

Երևանում տպագրվեց և տարածվեց ՀՀԴ-ի, ՀԺԿ-ի, Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության, մենշեվիկյան և բոլշևիկյան կուսակցությունների միացյալ թռուցիկը, որով կոչ էր արվում.«Բոլոր հայերին առանց հապաղելու համախմբել զինվորական մարմինների շուրջը և մեկ մարդու պես, խիտ շարքերով կանգնել թշնամու դեմ»: «Շղթաները ոտքի ելան և «ուռա՜» կանչելով առաջ վազեցին, իսկ թուրքերը խուճապի մատնվեցին, որովհետև նրանց թիկունքը անցած ջոկատը կրակ էր բացել թուրքերի պաշարակի սայլերի և թիկունքի վրա: Մի պահ և թուրքերը փախուստի դիմեցին՝ լքելով իրենց ամբողջ ռազմամթերքը, պաշարակիր սայլերը և սպանվածների դիրերը»:

Մայիսի 27-ի վճռական հաղթանակի գործում մեծ դեր խաղաց ոչ միայն հայկական հրամանատարության կողմից փայլուն կերպով մտահղացված և կազմված հարձակման պլանը, այլ նաև հայկական զորքերի ցուցաբերած զանգվածային խիզախությունը: Այդ օրը, առանձին հայ զինվորներ և սպաներ հերոսության բազմաթիվ ու անկրկնելի օրինակներ տվեցին: Այդպիսին էր գնդացրորդ Տիգրան Սարումյանի սխրանքը, որի մասին գրել է 10-րդ վաշտի դասակներից մեկի հրամանատար Մարտին Մարտիրոսյանը. «Բոլոր վաշտերը իրենց ձեռքի գնդացիրներով դուրս թռան խրամատներից, գնդացրորդ Տիգրան Սարումյանը կրակ մաղելով, քայլում էր դասակի առջևից՝ թույլ չտալով, որ թշնամին բարձրացնի գլուխը: Մենք նրան հազիվ էինք հասնում: Սարումյանը թշնամու աջ թևի ժայռերի արանքից դուրս էր եկել բարձունքի կատարը և փամփշտահերթի տակ էր պահում թշնամուն: Սակայն նա վիրավորվեց պատահական գնդակից, երբ նրան մոտեցանք, նա բարձրացրեց գլուխը և բացականչեց,- Թող ապրի ... Հայաստանը: Նա ընկավ իր գնդացրի վրա և անշնչացավ»:

Սարդարապատի հերոսամարտն ավարտվեց հայերի հաղթանակով, իսկ թշնամին հետ շպրտվեց 50-60կմ: Երևանին սպառնացող վտանգը վերացվեց: Արարատյան դաշտում թուրքական զորքերի կրած լիակատար պարտությունը դարձավ Արևելյան Հայաստանի նվաճման և արևելահայության ոչնչացման թուրքական հայաջինջ պլանի ձախողման պատճառը:

Իսկ որո՞նք էին Սարդարապատի ճակատամարտի հաղթանակի պատճառները.

- ժողովուրդ-բանակ-ղեկավարություն բացառիկ միասնությունը, որ արդյունք էր հետագա նահանջի կործանարարության հետագա գիտակցման:
- Թիֆլիսի հետ կապի լիակատար խզման հետևանքով Անդրկովկասյան Սեյմի և կառավարության դավաճանական ներգործության և կենտրոնական Հայոց ազգային խորհրդի անպտուղ ղեկավարության գրեթե լիակատար բացակայությունը: Այդ հանգամանքը երևանյան ռազմաքաղաքական ղեկավարության հնարավորություն տվեց՝ ճակատագրական պահին գործել առավել ինքնուրույն և վճռական, առանց ավելորդ կաշկանդվածության:
- երևանյան քաղաքական-ռազմական-հոգևոր ղեկավարության՝ Արամի, Գևորգ Ե կաթողիկոսի, Սիլիկյանի, Դրոյի և Դանիել Բեկ-Փիրումյանի ցուցաբերած վճռականությունը և անձնական խիզախությունը:
- Բաշ-Ապարանի հաղթանակը, որով ձախողվեց Սարդարապատի ջոկատին՝ թիկունքից հարվածելու թշնամու ծրագիրը:
- զգալի թվով մարտական մեծ փորձ և հարուստ գիտելիքներ ունեցող ռուսական սպաների առկայությունը հայկական զորքեում:
- թուրքական հրամանատարության կոպիտ վրիպումը՝ որպես արդյունք սեփական գերազանցության պատրանքի և հակառակորդի թերագնահատման:

Սարդարապատի ճակատամարտից 40 օր անց, փորձելով շոշափել հայկական զորքերի պաշտպանունակությունը Բաթումի հաշությունից հետո ստեղծված պայմաններում, թուրքական 36-րդ դիվիզիայի մեկ գունդ հարձակման անցավ Քյորփալու-Թուրքի Զեյվա գծում դիրքավորված հայկական 5-րդ գնդի դեմ: Գրեթե ամբողջ օրը տևած մարտի արդյունքում հայկական ուժերը վճռական հակահարվածով հակառակորդին հետ շպրտեցին հետ՝ ելման դիրքեր:

Ջախջախիչ հարված ստանալով թուրքական հրամանատարությունը ստիպված էր հուլիսի 18-ին «ցավակցություն» հայտնել այդ կռվի կապակցությամբ: Հաջողության դեպքում, թուրքական կողմը,

բնականաբար, հարձակման կանցներ ամբողջ ճակատով մեկ՝ փորձելով ռևանշի հասնել Սարդարապատի ճակատամարտում կրած պարտության դիմաց[7]:

ԳԼՈՒԽ II

ԲԱՇ-ԱՊԱՐԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ՝ 1918Թ. ՄԱՅԻՍԻ 22-29

Մայիսի 21-ին Ալեքսանդրապոլ-Ղարաքիլիսա ուղղությամբ հարձակվող թուրքական զորքերը գրավեցին Համամլուն, որից հետո նրանց մի մասը (հրամանատար Էսադ փաշա) կտրուկ շրջվեց դեպի հարավ՝ Սպիտակի լեռնացքով դուրս գալով Ապարանի սարահարթ: Նպատակը՝ օգտագործելով Բաշ-Ապարանի շատ հարմար ռազմական ուղղությունը (Համալու- Բաշ -Ապարան-Աշտարակ-Երևան), Երևանյան զորախմբին հարվածել թիկունքից՝ հյուսիս - արևելքից:

Գրեթե միաժամանակ, մայիսի 20-21-ին, հակառակորդի մի այլ զորասյուն Ապարանի սարահարթ դուրս եկավ Արագածի հյուսիսային լանջերով՝ միանալով Համամլուից հարձակվող ուժերին: Մայիսի 20-ին այս զորասյունը գրավեց Հաջիխալիլ գյուղը, ուր 77 տղամարդիկ ձեռբակալվեցին և հաջորդ օրը գնդակահարվեցին մոտակա ձորում: Նախօրեին, գյուղից հեռացած 40 երիտասարդներ միացան Դանագիրմազի աշխարհազորայիններին: Քյուլուջացի աշխարհազորային Ալեքո Մուրադյանը, Հաջիխալիլում ծպտված կերպով մասնակցելով թուրք զորահրամանատարի պատվին կազմակերպված խնջույքին և տեղեկանալով թշնամու հետագա պլանների մասին՝ գիշերը սրարշավ հասավ Երևան և այդ մասին պատմեց Ա. Մանուկյանին: Վերջինս անմիջապես հրամայեց Արսեն Աղային (Արսեն Տեր-Պողոսյան, հռչակավոր Խենթի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի որդին)

[7] Ռ. Թադևոսյան, Դրվագներ Հայոց ռազմի պատմությունից. 19-20-րդ դդ., Երևան, Զանգակ, 2012:

Սարդարապատի ճակատից շտապ մեկնել Բաշ-Ապարան՝ կազմակերպելու համար շրջանի ինքնապաշտպանությունը, մինչև կանոնավոր զորքերի տեղ հասնելը:

Դեռևս 1918թ. ապրիլին, նախքան Կարսի անմկումը, Ա. Մանուկյանը և Մ. Սիլիկյանը համապատասխան հրահանգներ էին տվել շրջանի կոմիսար Ս. Ջալալյանի և Արսեն Աղային՝ աշխարհազորի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ, ինչը և բարեխղճորեն կատարվել է նրանց կողմից:

Թուրքական զորքերի և հայկական աշխարհազորի միջև 1-ին բախումը տեղի ունեցավ Դանագիրմազ գյուղի մատույցներում, մայիսի 22-ին թուրքական առաջապահ հեծելավաշտն ընկավ լավ քողարկված հայկական ջոկատների կործանիչ կրակի տակ և հետ շպրտվեց: Սակայն հետագայում, չդիմանալով հակառակորդի հիմնական ուժերի ճնշմանը և հատկապես՝ հրետանային կրակին, հայկական ջոկատները ստիպված էին մայիսի 22-23-ի գիշերը հետ քաշվել դեպի Բաշ-Ապարան և Դավաբոյի լեռը: Ըստ այդմ, երկուստեք եղան ծանր կորուստներ: Մայիսի 23-ին թուրքական ուժերի և հայկական աշխարհազորային ջոկատների միջև մյուս հիշարժան մարտը տեղի ունեցավ Միրակ գյուղի կամրջի մոտ: Արսեն Աղայի հրամանատարությամբ կռվող հայ աշխարհազորայինները հարձակվող թշնամուն պատճառեցին ծանր կորուստներ, սակայն նեղվելով զինամթերքի պակասից, մայիսի 23-34-ի գիշերը նրանք ստիպված էին հետ քաշվել՝ թողնելով Բաշ-Ապարանը, Մուլքին, Ղարանլուղը:

Տեղեկանալով Բաշ-Ապարանի ռազմական ուղղությամբ հակառակորդի առաջխաղացման մասին գեներալ Մ. Սիլիկյանը ստիպված էր Երևանյան զորախմբի կազմից որոշ ուժեր՝ գնդարպետ Դոլուխանյանի 6-րդ գունդը, և գնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը նետել թշնամուն ընդառաջ: Նոր ձևավորվող ճակատի հրամանատար նշանակվեց Դրոն, ով անհապաղ մեկնեց Բաշ-Ապարանի ռազմաբեմ: Սակայն մինչ մեկնումը, Դրոն Սիլիկյանին խնդրեց նախ ավարտին հասցնել հակառակորդի սարդարապտյան խմբավորման ջախջախումն և հետո նոր ուժգին հարված հասցնել նաև Բաշ-Ապարանյան ուղղությամբ հարձակվող թուրքերին: Դրոյի այս առաջարկը հիմնված էր այն մտավախության վրա, որ միասնական երևանյան խմբավորման մասնատումը կարող էր խոչընդոտել Երևանի վրա հարձակվող թուրքական 36-րդ դիվիզիայի լիակատար ջախջախմանը: Իսկ Բաշ-Ապարանյան ուղղությամբ հարձակվող թշնամուն Դրոն մտադիր էր միառժամանակ կասեցնել միայն աշխարհազորային և կամավորական ջոկատների միջոցով, ժամանակ շահել և վճռական ճակատամարտ տալ Աշտարակի մատույցներում: Մ.Սիլիկյանը չցանկանալով ռիսկի ենթարկել Երևանի անվտանգությունը՝մերժեց Դրոյի առաջարկը:Մեկնելով նոր ձևավորվող Բաշ-Ապարանի

ռազմաճակատ՝ Դրան իր հետ տարավ ոչ միայն Սիլիկյանի կողմից տրամադրված կանոնավոր զորամասեր, այլ նաև բավական մեծ քանակությամբ կամավորական խմբեր: Տեղում, նույնպես մեծ թվով աշխարհազորայիններ համալրեցին Դրոյի նոր ձևավորվող զորախումբը:

Մայիսի 24-ին Ալիքուչակ հասավ 6-րդ հետևակային գունդը: Զորքի հետ միասին ճակատ էին եկել նաև Սարդարապատի հերոս Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, հայ գրողներ Հ. Հովհաննիսյանը և Վ. Սաղաթելյանը: Նրանք այստեղ մնացին մինչև Բաշ-Ապարանի հերոսամարտի հաղթանակի ավարտը:

Ալիքուչակում 6-րդ գնդին ցույց տրվեց բացառիկ հանդիսավոր ընդունելություն:Դիմավորելու էին եկել Բաշ-Ապարանի քաջարի աշխարհազորի աշխարհիկ և հոգևոր բոլոր առաջնորդները՝ Արսեն Աղայի գլխավորությամբ: Տեղի գյուղացիությունը և բազմահազար գաղթականներ ցնծության աղաղակներով դիմավորեցին հայ փրկարար զորքին:

Տեղի ունեցած միտինգում կրակոտ ելույթներ ունեցան Գարեգին եպիսկոպոսը, Արսեն Աղան, իսկ ամենավերջում՝ գնդապետ Դոլուխանյանը, որն իր խոսքն ավարտեց նահատակի երդումով. «Երդվում եմ Աստծով, զինվորականի ազնիվ խոսքով, որ ես էլ ձեզ հետ միասին կմեռնեմ, առաջինը ես, բայց Արագածս չեմ տա թուրքերին»:

Մայիսի 25-ին վաղ առավորտյան, Սարդարապատի հերոս, կապիտան Վ. Սակելյարիի մարտկոցի կրակով սկսվեց հայկական առաջին հարձակումը Բաշ-Ապարանի Ղարանլուղի և Հաջիբաղի թուրքական դիրքերին: Բաշ-Ապարանյան խմբավորման հիմնական հարվածային ուժը կազմում էր 6-րդ հրաձգային գունդը, որը դիրքեր էր զբաղեցրել ճակատի ձախ թևում՝ խճուղուց մինչև Արագած լեռն ընկած հատվածում: Մյուս 2 առավել հզոր զորամասերը՝ 2-րդ հեծյալ և Պարտիզանական հեծյալ գնդերը դիրքավորվել էին խճուղուց աջ ընկած հատվածում[8]:

Մայիսի 27-ին ծավալված մարտերի կատաղի բնույթի մասին է վկայում Մ. Թոռլեքյանը, ով հենց այդ օրը ծանր վիրավորվեց և տեղափոխվեց Աշտարակ. «Կռվի տաք պահում, Դրոն հրամայեց մեզի, որ ձիերը նստինք, անցնինք գնդացիրներու տարափին տակեն փոքր դաշտե մը, և գրավենք թշնամիին առաջին դիրքը: Ձիավորներս՝ շուրջ 300 հոգի, նստանք ձիերը և քշեցինք կրակի տարափին տակ: Դրոն սաստկացրեց թնդանոթային կրակը: Մտանք թշնամիին դիրքերի տակ, վերի կրակեն ապահով:

[8] Ռ. Թադևոսյան, Դրվագներ Հայոց ռազմի պատմությունից. 19-20-րդ դդ., Երևան, Զանգակ, 2012:

Հոս ձիերն թողուցինք, սկսանք կռվող բարձրանալ և գրավել առաջին դիրքերը՝ փախուստի մատնելով թշնամին»:

Մայիսի 28-ի բախտորոշ ճակատամարտի ընթացքում, հակառակորդը կիրառեց իր սիրած տակտիկան՝ ոտքի հանելով տեղի հայաստանաբնակ թուրք-թաթարական գյուղերի բնակչությանը: Սակայն Սեդրակ Ջալալյանի աշխարհազորային ջոկատի կողմից ջախջախիչ հակահարվածով հետ շպրտվեցին:

Մայիսի 29-ին հետ մղելով թշնամու ձեռնարկած մի քանի հակագրոհները և վերջնականապես պարտության մատնելով նրան՝ հայկական ուժերը զբաղեցրին Դանագիրմազ գյուղ-Չանղրը լեռ գիծը:

Բաշ-Ապարանի ճակատամարտի վերջին 3 օրերին (մայիսի 27-29) կրելով ծանր պարտություն և տանելով մեծ կորուստներ՝ թուրքերը Շորագյալի գյուղերից բերեցին մեծ թվով սայլեր, որոնք մի քանի օր անընդմեջ տեղափոխում էին սպանված ասկյարների դիակները:Դրանից հետո բոլոր սայլապանները հավաքվեցին և գնդակահարվեցին:

Մայիսի 30-ին թուրքական հրամանատարության կողմից ուղարկված թուրք բանագնացը հայկական կողմին հաղորդեց մայիսի 29-ին Բաթումում կնքված զինադադարի մասին՝ կապված հայկական պատվիրակության կողմից թուրքական եռօրյա վերջնագրի ընդունման հետ:Այդ պահից սկսած՝ակտիվ մարտական գործողությունները Բաշ-Ապարանի ճակատում դադարեցվեցին:

Իսկ որո՞նք էին Բաշ-Ապարանի ճակատամարտում հայկական զորքերի տարած հաղթանակի պատճառները:

- Գեներալ Մ.Սիլիկյանի կողմից բաշապարանյան ուղղության կարևորության հստակ գիտակցումը,որի արդյունքում նա Բաշ-Ապարանի ճակատամարտի ամբողջ ընթացքում Սարդարապատի զորախմբից նորանոր ուժեր էր տրամադրում Դրոյին:
- Հայկական զորահրամանատարության և հատկապես Դրոյի ցուցաբերած ռազմական բաձր գիտելիքները,որով նա գերազանցեց թուրքական հրամանատարությանը:
- Սարդարապատի ճակատամարտում հայերի տարած հաղթանակը:
- Հայ գյուղացիության հայրենասիրական պայքարը:
- Ռազմաճակատ-թիկունք միասնությունը:
- Հայ հոգևորականության անուրանալի դերը հայ զորքին ոգեկոչելու և շատ դեպքերում էլ մարտի առաջնորդելու գործում:

Բաշ-Ապարանի հերոսամարտում նվաճված հաղթանակում հատուկ պետք է ընդգծել Դրոյի բացառիկ ներդրումը: Դրոյի հանդեպ ապարանցիների հատուկ վերաբերմունքի արտահայտությունը երևաց մեկ տարի անց՝Հայաստանի անկախության հռչակման մեկամյա տարեդարձին նվիրված տոնակատարության կապակցությամբ:Կառավարությանը հղած խնդրագրում ապարանցիները կառավարությանն առաջարկում են Բաշ-Ապարանը վերանվանել Դրոբերգ՝ ի պատիվ Դրոյի:

2000թ. մեծ հայրենասերն ու մեծ զորավարն իր վերջին հանգրվանը գտավ ապարանյան հողում:1956թ. մարտի 8-ին Բոստոնում վախճանված և այնտեղ հանգչող զորավարի աճյունը տեղափոխվեց Հայաստան ու զինվորական արտակարգ պատիվներով ամփոփվեց Ապարանի 1915թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի, Հայրենական պատերազմի հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողի ստորոտում:Դա մեծ հայի կտակն էր, վերջին ցանկությունը՝ընդմիշտ լինել հանուն Հայաստանի՝ Բաշ-Ապարանի հերոսամարտում ընկած իր հերոսների կողքին:

ԳԼՈՒԽ III

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ. 1918Թ. ՄԱՅԻՍԻ 24-28

1918թ. մայիսի 18-ին Հայկական կորպուսի առաջին դիվիզիայի հրամանատար գեներալ Մ. Արեշյանը զեկուցում է կորպուսի հրամանատարությանը, որ զանգվածային դասալքության հետևանքով Ալեքսանդրապոլից Ղարաքիլիսա նահանջող իր դիվիզիայում մնացել է 800 հոգի: Կանխատեսելով գալիք վտանգները և ձգտելով խուսափել պատասխանատվությունից, նա արձակուրդ է խնդրում Թ. Նազարբեկյանից և մեկնում Թիֆլիս: Հրամանատարությունը փոխանցվում է Ալ. Բեյ-Մամիկոնյանին: Մայիսի 21-ին թուրքերն առանց կռվի գրավեցին ճանապարհի կարևոր հանգույց Համամլուն և շարունակեցին առաջխաղացումը: Հայկական ուժերը նահանջեցին դեպի Ղարաքիլիսա. նրանց հրամայվեց հետ քաշվել դեպի Դիլիջան:

Մայիսի 24-ին Նազարբեկյանի հրամանով Դիլիջան ժամանեց Ղազախի տարածքային գունդը՝ համալրելու համար Ղարաքիլիսայի քայլքայված ջոկատը:

Սարդարապատի ռազմաճակատում սկսված հայկական զորքերի հաջող հարձակման և այդ կապակցությամբ մայիսի 23-ին գումարված միտինգում կապիտան Գուրգեն Մովսիսյանի և Գարեգին Նժդեհի բոցավառ ելույթների ազդեցությամբ՝ Ղարաքիլիսայի ջոկատը վերակազմակերպվեց և մայիսի 24-ին մարտական կարգով հետ վերադառնալով՝ վերագրավեց

2-3 օր առաջ իր կողմից լքված Ղարաքիլիսան: Կապիտան Արտավազդ Հարությունյանը պատմում է. «Ծովածավալ բազմությունը, որ հուսալքված, ընկճված, հոգեկան ծանր տագնապի մատնված մեկեն փոխվեցավ հմայված և հիպնոզացած Նժդեհի հրահուչ խոսքերեն: Էլեկտրականացած ամբոխը ռազմական բարձր տրամադրություն ցույց տվավ և սկսեց գոչել՝ «Կեցցե՛ Նժդեհը»,«Մահ կամ Ազատություն»»[9]:

Այդ ընթացքում թուրքական զորքերը վախեցել էին մտնել գյուղաքաղաք՝ զգուշանալով գոյություն չունեցող ծուղակից: Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրեին, իսկ ապա նաև ճակատամարտի ընթացքում, իր անձնական խիզախությամբ փայլեց 4-րդ հրետանային մարտկոցի հրամանատար կապիտան Գուրգեն Մովսիսյանցը: Նժդեհի հեծելախմբի հետ միասին, նրա մարտկոցը (50 զինվոր) կազմեց Ղարաքիլիսայի ռազմաբեմ վերադարձող հայկական զորքերի առաջապահը:

Մայիսի 25-ին հայկական ուժերը 3-4 ժամյա կռվից հետո գրավեցին Ղշլաղը և Դարբասը: Ն. Ղորղանյանի կողմից Արջուտ կիսակայարանի վրա նետված հեծելավաշտը կանգնեցվեց հրետանային կրակով: Հաջիղարայի արյունահեղ մարտում հերոսաբար զոհվեց Գ. Մովսիսյանցը: Զոհվելուց առաջ, խիզախ հրետանավորը սպառելով իր հրանոթների ամբողջ զինապաշարը հրամայեց իրենց լծասարքերից ազատել մարտկոցի բոլոր ձիերին և ապա դրանց հեծած սրամերկ գրոհել հակառակորդին, ինչը և կատարվեց անհապաղ:

Օրվա ընթացքում թուրքերը կրեցին շատ մեծ կորուստներ, միայն հայական հեծելազորի կողմից սրածվեց 200 ասկյար: Մայիսի 26-ի մարտը հետևյալ կերպ է ներկայացվում «Ռազմիկ» թերթում. «Վեց ժամյա լարված թնդանոթաձգությունից հետո, ուղիղ կեսօրին մեր զորքերն ընդհանուր հարձակման անցան: Փոշու ամպեր էին բարձրանում: Սակայն շուտով մեր զորքերի հետապնդումը կանգնեցվում է մեր զորահրամանատարության կողմից. ոչ միայն կանգնեցվում, այլև հրաման է տրվում մեր ձախ թևի զորամասերին հետ նահանջել բռնած դիրքերից»[10]:

Հայկական հրամանատարության այդ վարանոտ և ոչնչով չարդարացված քայլը, որ արդյունք էր սեփական ուժերի հանդեպ վստահության պակասի, բացասական մեծ ազդեցություն ունեցավ ճակատամարտի ամբողջ հետագա ընթացքի վրա:

[9] Ռ. Թադևոսյան, Դրվագներ Հայոց ռազմի պատմությունից. 19-20-րդ դդ., Երևան, Զանգակ, 2012:
[10] «Ռազմիկ» թերթ, 1920. 11. 22:

Նպատակ ունենալով լիովին շրջապատել Ղարաքիլիսայի ջոկատը, թուրքական հրամանատարությունը օգտագործելով իր ունեցած իր կենդանի ուժը, գրեթե կրկնակի և հրետանու բացարձակ գերակշռությունը, համալրումների և զորաշարժերի միջոցով կարողացավ ստեղծել հարվածային ուժեղ խմբավորումներ հայկական աջ և ձած թևերի դեմ: Իսկ հայկական ուուժերը ոչ մի համալրում չստացան:

Մայիսի 27-ին հստակ ուրվագծվեց թուրքական հրամանատարության պլանը՝ հարավից և հյուսիսից կատարվող հայկական թևերի խոր շրջանցումներով լիովին շրջապատել և ջախջախել Ղարաքիլիսայի ջոկատը, դրանով իսկ բացել դեպի Ղազախ, Թիֆլիս, Երևան տանող ուղիները: Ստեղծված դրաությունը հայկական կողմի համար օրհասական էր դառնում ոչ միայն պահեստային ուժերի իսպառ բացակայության, այլ նաև զինամթերքի վերահաս սպառման պատճառով: Միայն մի հանգամանք կարող էր կանխել մոտեցող աղետը և նույնիսկ թեքել հաղթանակը մեր օգտին՝Անդրանիկի օգնության հասնելը մայիսի 28-ին: Բայց Անդրանիկը չմասնակցեց Ղարաքիլիսայի ճակատամարտին: Այդ մասին Ավետիս Ահարոնյանը գրում է. «Իզուր սպասեցինք Անդրանիկին, նա չկար և չպիտի հայտնվեր: Նրա ունեցած մի քանի հազար զինվորների (3000) 1/7-ը անգամ բավական պիտի լիներ, կտրելով երկաթուղու գիծը, գալ և թառել Ղարաքիլիսան եզերող արևելյան բաձունքներին»:

Մայիսի 29-ին Անդրանիկի սուրհանդակը ներկայացավ գնդապետ Ն. Ղորղանյանին՝ նրան իր ջոկատով հրավիրելով Դսեղ՝ Անդրանիկի մոտ: Այդ հանդիպման մասին հայրենասեր գնդապետը հետագայում գրել է. «Իհարկե, իմ առաջին հարցը Անդրանիկին եղավ, թե ինչու նա դուրս չեկավ իմ աջ թևը: Անդրանիկն ինձ ցույց տվեց գեներալ Նազարբեկյանի հեռագիրը, որի համաձայն նա պետք է պաշտպաներ երկաթուղին: Գնդապետ Բեյ-Մամիկոնյանի խնդրանքը նա համարում էր իր համար ոչ պիտանի»:

Անդրանիկի նման կեցվածքը որոշ հայ պատմաբաններ բացատրում են նրանով, որ նա ուներ Նազարբեկյանի հրամանը՝ պաշտպանել երկաթուղին: Սակայան այդ փաստարկը չափազանց թույլ է և անհամոզիչ 2 պատճառով: Նախ՝ կա ռազմական արվեստին վերաբերվող մի անառարկելի օրենք, համաձայն որի շատ արագ փոփոխվող պատերազմական իրադրությունում կատարվում է հրամանատարության ժամանակագրական առումով միայն վերջին հրամանը, իսկ մինչ այդ հրամանները համարվում են հնացված և ուժը կորցրած: Անդրանիկը, որպես փորձված հայդուկապետ, առաջին աշխարհամարտի բովով անցած հրամանատար և վերջապես՝ ռուսական բանակի գեներալ, չէր կարող չիմանակ

ռազմարվեստի այդ կարևորագույն դրույթներից մեկի մասին: Հետևաբար, գնդապետ Բեյ-Մամիկոնյանի հրամանից օրեր առաջ տրված Նազարբեկյանի հրամանը դաձնել վահան և արդարացնել Անդրանիկին ճիշտ չէ: Եթե չլիներ էր անգամ Բեյ- Մամիկոնյանի հրամանը, Անդրանիկը պետք է ցուցաբերեր նախաձեռնություն, որ պարտավոր են անել բոլոր աստիճանների հրամանատարները, եթե իրադրությունը դա է թելադրում: Նաև հայտնի է, որ թուրքերը երկաթգծի և Դսեղի ուղղությամբ որևէ ռազմական գործողություն չձեռնարկեցին և նույնիսկ սպառնալիք չստեղծեցին: Այստեղ փաստն այն է, որ հայկական 7000-անոց զորախումբը 4 օր շարունակ դաժան ճակատամարտ էր մղում իրեն գերազանցող թշնամու դեմ, իսկ Անդրանիկը իր 3000-անոց բրիգադով, շատ մոտ գտնվելով ճակատամարտի վայրին, մնաց անհաղորդ այդ ամենին...

Դեպի Դիլիջան թուրքերի առաջխաղացում տեղի չունեցավ: Չնայած Ղարաքիլիսայի ճակատամարտում հայկական զորքերը ծանր պարտություն կրեցին, բայց թուրքական զորքերն իրենց հերթին տվեցին մեծ կորուստներ և չհամարձակվեցին այլևս շարունակել հարձակումը Դիլիջան- Ղազախ ուղղությամբ, որը դեպի Գանձակ-Բաքու նետվող թշնամու համար գլխավոր ուղղությունն էր: Հենց այդ ծանր կորուստները և Անդրանիկի կողմից Դիլիջանի մատույցները ամուր կերպով փակելը, ինչպես նաև Բաշ-Ապարանի ճակատում թուրքերի կրած ծանր պարտությունը եղան այն հիմնական պատճառները, որոնք ստիպեցին թուրքերին կտրուկ կերպով փոխել հարձակման ուղղությունը՝ Շուլավեր-Թիֆլիսից դեպի Ղարաքիլիսա:

Իսկ որո՞նք էին Ղարաքիլիսայի ճակատամարտի պարտության պատճառները.

- թուրքական կողմի կենդանի ուժի և սպառազինության մեծ գերակշռությունը,
- հայկական զորքերի զինամթերքի լրիվ սպառվելը՝ հրամանատարության հանցագործ անփությունության հետևանքով,
- ճակատամարտի ամբողջ ընթացքում, ի տարբերություն թշնամու՝ հայկական ուժերը չթարմացվեցին և չհամլրվեցին՝ պահեստային ուժերի բացակայության հետևանքով,
- ճակատամարտի ընթացքում Անդրանիկն իր բրիգադով մնաց Դսեղում՝ դիտողի դերում:

Ղարաքիլիսայի ճակատամարտում հայկական զորքերի կրած պարտությունը, դեպքերի ականատես և մասնակից հոգևորական Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը բացատրել է հետևյալ կերպ. «Եթե Ղարաքիլիսայի պատերազմի, հակառակ հայ զինվորի անվեհեր

քաջության, այնքան անփառունակ վերջացավ, ուստի դրա մեղքը ընկնում է միայն ապաշնորհ ղեկավարների վրա»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1918թ. մայիսին տեղի ունեցած հերոսամարտերը փոխկապակցված են: Դրանցից թեկուզ և մեկում, կողմերից որևէ մեկի հաղթանակը կամ պարտությունը անմիջականորեն ազդում էր մյուս 2 ճակատամարտերի արդյունքի վրա: Այս իմաստով գերագնահատել կամ թերագնահատել դրանցից որևէ մեկի նշանակությունը՝ ճիշտ չի լինի: Մայիսյան հերոսամարտերի արդյունքում հաձակումն Արևելյան Հայաստանում, որի շնորհիվ արևելահայության և արևմտահայ գաղթականության մեծ մասը փրկվեց թուրք բարբարոսների կազմակերպված նոր ցեղասպանությունից: 1918թ. մայիսի 28-ին ծնունդ առավ ՀՀ, որի գոյության հետ ստիպված էր հաշտվել Օսմանյան Թուրքիան և նրա հետ կնքել Բաթումի հաշտության պայմանագիրը:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ ապրիլյան քառօրյան և Արցախյան 44-օրյա պատերազմը մի փոքրիկ Սարդարապատ էր, որտեղ հայ զինվորի կողքին կանգնած էր հայոց եկեղեցին, հայ մտավորականությունը և ամբողջ ժողովուրդը: Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունները նույնպես մասնակցեցին այս պատերազմներին:

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը մղել է հազարավոր ճակատամարտեր, հիմնականում հաղթական: Այսօր իրենց նշանակությամբ նշանավոր է Ավարայրը, Սարդարապատը և Շուշին: Եթե Ավարայրը առաջին հայրենական պատերազմն է, նաև աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն, որ մեզանում մնաց հանուն հայրենիքի անձնազոհության և գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ, իսկ Շուշին դրան ավելացրեց նաև նոր ժամանակներում մեր չհնացող ազատասիրության վերածննդի ոգին, ապա Սարդարապատը առանձնանում է մի բախտորոշ խորհրդով. նախ մեզ համար չկան անելանելի վիճակներ, մենք միշտ ուժեղ ենք ավելի քան պատկերացնում ենք, և հետո՝ մենք դատապարտված ենք ապավինելու միայն մեր սեփական ուժերին, կարողություններն, հնարավորություններին... Մեր անհաջողություններն սկսվում են այնտեղ, որտեղ հույսեր ենք փայփայելու օգտվելու օտարի բարեկամությունից: ԵՎ դրան հակառակ՝ չի եղել մի դեպք, երբ մենք համախմբված և ինքնուրույն ելնենք վճռական մարտի կամ այլ գործողության և ձախողվենք: Սարդարապատն ապացուցեց, որ այդ մենակությունը նաև մեր ազգային իղձերի իրականացման միակ գրավականն է:

Այս պատերազմներից մենք մի կարևոր դաս քաղեցինք՝ այս տարածաշրջանի դերակատարը հենց մենք ենք: ԵՎ այս ակամա դասը պիտի դարձնենք կամային ինքնագիտակցություն և համազգային վստահություն: Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայերը, երբեք չեն լքել իրենց հայրենիքը և իրենք են իրենց բոլոր տարածքների հավերժական տերերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բ. Ա. Ուլուբաբյան, Սարդարապատ, Երևան, Նարիր 1990:
2. Հ. Գ. Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Հայաստան. Երևան 1965:
3. Ռ. Թաղևոսյան, Դրվագներ հայոց ռազմի պատմությունից. 19-20-րդ դդ, Զանգակ. Երևան 2012:
4. «Աշխատանք» օրաթերթ, Երևան 1918.06.08:
5. «Ռազմիկ» թերթ, 1920.11.22:
6. Корганов Г. Г, Участие армяан в мировой войне на Кавказском фронте, 1914-18. М. Макс. Пресс 2011.